Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



«Ինձանից սովորեցէք»

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մենք բոլորս էլ ուսուցիչներ ենք և մենք բոլորս էլ սովորողներ ենք: Տերը բոլորին էլ հղում է այս մեղմ հրավերը. «Ինձանից սովորեցէք . . . եւ ձեր անձերի համար հանգստութիւն կգտնէք»:[1]

Ես հրավիրում եմ բոլոր Վերջին Օրերի Սրբերին խորհել սովորեցնելու և սովորելու իրենց ջանքերի շուրջ և այդ ընթացքում նայել Փրկիչին որպես մեր Առաջնորդի: Մենք գիտենք, որ «Աստուածանից վարդապետ եկածը»[2] ավելին էր, քան լոկ ուսուցիչ: Նա, ով սովորեցրել է մեզ սիրել Տիրոջը՝ մեր Աստծուն, մեր ողջ սրտով, մեր ողջ հոգով, մեր ողջ ուժով, մեր ողջ մտքով և սիրել մեր մերձավորին մեր անձի պես, Մեծ Ուսուցիչն է և կատարյալ կյանքի Օրինակը:

Նա է, որ հայտարարեց. «Եկ հետեւիր ինձ»:[3] «Ես օրինակ եմ ձառայում ձեզ համար»:[4]

Եթէ դարձ չգաք

Հիսուսն ուսուցանեց մի պարզ, սակայն կարևոր ճշմարտություն, որը տրված է Մատթեոսի գրքում: Երբ Նա և Իր աշակերտներն իջան Այլակերպության Սարից, նրանք կանգ առան Գալիլեայում և ապա գնացին Կափառնայում: Այնտեղ աշակերտները եկան Հիսուսի մոտ և հարցրին.

«Ո՞վ է մեծ երկնքի արքայութեան մէջ:

Եւ Յիսուսն իր մոտ մի երեխայ կանչելով, նորան կանգնեցրեց նորանց մէջտեղը.

Եւ ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. *եթե դարձ չգաք* և չլինիք երեխաների նման, չէք մտնիլ երկնքի արքայութիւնը»:[5]

Եկեղեցում ավետարանի ուսուցման նպատակը Աստծո զավակների մտքում տեղեկություններ լցնելը չէ՝ լինի դա տանը, դասարանում թե միսիայում: Դրա նպատակը չէ ցույց տալ, թե որքան բան գիտի ծնողը, ուսուցիչը կամ միսիոները: Ոչ էլ այն պարզապես Փրկիչի և Նրա Եկեղեցու մասին գիտելիքները շատացնելու համար է:

Ուսուցման հիմնական նպատակն է օգնել Երկնային Հոր որդիներին և դուստրերին վերադառնալ Նրա ներկայության մեջ և վայելել հավերժական կյանքը Նրա հետ միասին: Այն իրականացնելու համար ավետարանի ուսուցումը պետք է քաջալերի նրանց ամեն օր քայլել աշակերտության ուղով և պահել սուրբ ուխտերը: Նպատակն է՝ ոգեշնչել անձին մտածել ավետարանի սկզբունքների մասին, զգալ դրանք և ապա անել որևէ բան՝ դրանցով ապրելու համար: Նպատակն է՝ զարգացնել հավատք առ Տեր Հիսուս Քրիստոսը և դառնալ *դարձի եկած* դեպի Նրա ավետարանը:

Ուսուցումը, որն օրհնում, դարձի է բերում և փրկում է, այն ուսուցումն է, որը հետևում է Փրկիչի օրինակին:

Ուսուցիչները, ովքեր հետևում են Փրկիչի օրինակին, սիրում և ծառայում են նրանց, ում ուսուցանում են: Նրանք ոգեշնչում են իրենց լսողներին աստվածային ճշմարտության հավերժական դասերով: Նրանք ապրում են օրինակելի կյանքով:

Սիրել և ծառայել

Փրկիչի ողջ ծառայությունը ներկայացնում էր սեր մերձավորի հանդեպ: Իսկապես, Նրա սերը և ծառայությունը հաճախ հենց Նրա դասերն էին: Այդպես էլ ուսուցիչները, որոնց ես ամենալավն եմ հիշում, այն ուսուցիչներն են, ովքեր ճանաչում էին իրենց ուսանողներին, սիրում էին նրանց և մտահոգվում էին նրանց մասին: Նրանք փնտրում էին կորած ոչխարին: Նրանք ուսուցանում էին կյանքի դասեր, որոնք ես միշտ կհիշեմ:

Նման մի ուսուցիչ էր Լյուսի Գերչը: Նա գիտեր իր ուսանողներից յուրաքանչյուրին: Նա անպայման զանգում էր նրանց, ովքեր բացակայում էին կիրակի օրը կամ ովքեր պարզապես չէին գալիս: Մենք գիտեինք, որ նա մտահոգվում էր մեր մասին: Մեզանից ոչ մեկը երբևէ չմոռացավ ոչ նրան, ոչ էլ նրա ուսուցանած դասերը:

Շատ տարիներ անց, երբ Լյուսին մոտեցել էր իր կյանքի մայրամուտին, ես այցելեցի նրան: Մենք վերհիշեցինք այն օրերը, երբ նա եղել էր մեր ուսուցչուհին: Մենք խոսեցինք մեր դասարանի յուրաքանչյուր անդամի մասին և քննարկեցինք, թե ինչով էր զբաղվում նրանցից յուրաքանչյուրն այժմ: Նրա սերը և հոգատարությունը տևեց ողջ կյանքի ընթացքում:

Ես սիրում եմ Վարդապետություն և Ուխտերում գտնվող Տիրոջ հետևյալ պատվիրանը.

«Եվ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք միմյանց պետք է ուսուցանեք արքայության վարդապետությունը:

Ուսուցանեք ջանասիրաբար, և իմ շնորհը կուղեկցի ձեզ»:[6]

Լյուսի Գերչն ուսուցանում էր ջանասիրաբար, քանի որ նա սիրում էր անմնացորդ սիրով:

Տվեք հույս և ճշմարտություն

Պետրոս Առաքյալը տալիս է հետևյալ խորհուրդը. «Միշտ պատրաստ լինենք պատասխան տալու ամենին, որ մեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե»:[7]

Հավանաբար ամենամեծ հույսը, որն ուսուցիչը կարող է տալ, գտնվում է Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտություններում:

«Եվ ի՞նչն է, որի համար դուք պիտի հույս ունենաք»,- հարցնում է Մորմոնը: «Ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք կունենաք հույս, Քրիստոսի քավության և նրա հարության զորության միջոցով, բարձրացվելու դեպի հավերժական կյանք, և դա՝ ձեր հավատքի շնորհիվ առ նա՝ խոստումի համաձայն»:[8]

Ուսուցիչներ, բարձրացրեք ձեր ձայները և վկայեք Աստվածազլխի ճշմարիտ բնույթի մասին: Հայտարարեք ձեր վկայությունը Մորմոնի Գրքի վերաբերյալ: Հայտարարեք փրկության ծրագրում գտնվող փառահեղ և զեղեցին ճշմարտությունները: Օգտագործեք Եկեղեցու կողմից հաստատված նյութերը, հատկապես սուրբ գրությունները, որպեսզի ուսուցանեք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ճշմարտությունները՝ իրենց պարզությամբ ու մաքրությամբ: Հիշենք, որ Տերը պատվիրել է. «Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, եւ նորանք են որ ինձ համար վկայում են»:[9]

Օգնեք Աստծո զավակներին հասկանալ, թե ինչն է կարևոր այս կյանքում: Օգնեք նրանց զարգացնել ուժ՝ ընտրելու ուղիներ, որոնք նրանց ապահով կպահեն հավերժական կյանքի արահետում:

Ուսուցանեք ճշմարտությունը, և Սուրբ Հոգին կօրհնի ձեր ջանքերը:

«Ինձանից սովորեցէք»

Քանի որ Հիսուս Քրիստոսը կատարելապես հնազանդ էր և ենթարկվում էր Իր Հորը, Նա «զարգանում էր իմաստությունով և հասակով, և շնորհքով՝ Աստծո և մարդկանց մոտ»:[10] Արդյո՞ք մենք որոշել ենք նույն կերպ վարվել: Ճիշտ ինչպես Հիսուսը «ստացավ շնորհ՝ շնորհի տեղ»,[11] մենք պետք է համբերությամբ և հաստատակամությամբ փնտրենք լույս և գիտելիք Աստծուց, երբ ջանքեր ենք գործադրում ավետարանն ուսումնասիրելիս:

Լսելը սովորելու հիմնական մասն է: Երբ պատրաստվում ենք ուսուցանվելու, մենք աղոթքով փնտրում ենք ոգեշնչում և հաստատում Սուրբ Հոգու կողմից: Մենք խորհում ենք, մենք աղոթում ենք, մենք կիրառում ենք ավետարանի դասերը, և մենք փնտրում ենք Հոր կամքը մեզ համար:[12]

Հիսուսը «շատ բաներ էր սովորեցնում . . . առակներով»,[13] որոնք պահանջում էին լսելու ականջ, տեսնելու աչք և սիրտ՝ հասկանալու համար: Երբ մենք արժանապատիվ կյանքով ապրենք, մենք կկարողանանք ավելի լավ լսել Սուրբ Հոգու շշունջները, որ «ամեն բան կսովորեցնէ [մեզ] եւ կյիշեցնէ [մեզ] ամեն ինչ»:[14]

Երբ մենք արձագանքում ենք «Ինձանից սովորեցէք» Տիրոջ մեղմ հրավերին, մենք դառնում ենք Նրա աստվածային զորության ճաշակողները: Ուստի, եկեք առաջ գնանք հնազանդ հոգով, հետևելով մեր Օրինակին, սովորեցնելով այնպես, ինչպես Նա է ցանկանում, որ մենք սովորեցնենք և սովորելով այնպես, ինչպես Նա է ուզում, որ մենք սովորենք:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 11.29
2. Հովհաննես 3.2
3. Ղուկաս 18.22
4. 3 Նեփի 18.16
5. Մատթեոս 18.1–3, շեղագրերն ավելացված են:
6. Վարդապետություն և ուխտեր 88.77–78
7. Ա Պետրոս Գ.15:
8. Մորոնի 7.41
9. Հովհաննես 5.39
10. Ղուկաս 2.52
11. Վարդապետություն և Ուխտեր 93.12
12. Տես Հովհաննես 5.30
13. Մարկոս 4.2
14. Հովհաննես 14.26

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Մոնսոնը հրավիրում է մեզ «խորհել սովորեցնելու և սովորելու [մեր] ջանքերի շուրջ և այդ ընթացքում նայել Փրկիչին որպես մեր Առաջնորդի»: Դուք կարող եք ուսումնասիրել սուրբ գրությունները նրանց հետ, ում այցելում եք, որպեսզի գտնեք մտքեր, թե ինչպես է Հիսուս Քրիստոսն ուսուցանել և սովորել: Դուք կարող եք սկսել Նախագահ Մոնսոնի մեջբերած սուրբ գրություններից, որոնք են Մատթեոս 11.29, Հովհաննես 5.30 և Մարկոս 4.2: Դուք կարող եք քննարկել, թե ինչպես է Քրիստոսի մասին սովորածն օգնում ձեզ «դառնալ Նրա աստվածային զորության ճաշակողները»:

ԵՐԵԽԱՆԵՐ

Սովորել Հիսուսի մասին

Սուրբ Հոգին մեզ տալիս է խաղաղ զգացողություններ, որպեսզի օգնի մեզ իմանալ, որ Հիսուսը իրականում կա և սիրում է մեզ: Գրեք կամ նկարեք մի բան, ինչը սովորել եք Հիսուսի մասին:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15:
Թարգմանության հաստատումը. 6/15: *First Presidency Message, March 2016*-ի թարգմանությունը: Armenian 12863 201

Ստեղծված Աստծո պատկերով

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթի բովանդակությունը հասկանալն ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատքն առ Աստված և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք՝ reliefsociety.lds.org:

«Եւ Աստուած ասեց. Մեր պատկերովը եւ մեր նմանութեան պէս մարդ շինենք: . . .

Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց նորան. արու եւ էգ ստեղծեց նորանց» (Ծննդոց 1.26–27):

Աստված մեր Երկնային Հայրն է, և Նա ստեղծել է մեզ Իր պատկերով: Այս ճշմարտության մասին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Աստված՝ մեր Հայրը, ականջներ ունի, որոնցով լսում է մեր աղոթքները: Նա ունի աչքեր, որոնցով տեսնում է մեր գործերը: Նա ունի բերան, որով խոսում է մեզ հետ: Նա ունի սիրտ, որը լի է կարեկցանքով և սիրով: Նա իրական է: Նա ապրում է: Մենք նրա զավակներն ենք՝ նրա պատկերով ստեղծված: Մենք նման ենք նրան և նա նման է մեզ»:[1]

«Վերջին Օրերի Սրբերը բոլոր մարդկանց նայում են որպես Աստծո զավակների՝ բառիս բուն իմաստով, նրանք բոլոր մարդկանց համարում են աստվածային՝ իրենց ծագումով, բնությամբ և ներուժով»:[2] Յուրաքանչյուրը «երկնային ծնողների սիրելի որդին կամ դուստրն է»:[3]

«[Մարգարե] Ջոզեֆ Սմիթը նաև իմացավ, որ Աստված կամենում է, որ Իր զավակները ստանան նույն վեհացումը, որը Նա է ճաշակում»:[4] Ինչպես ասել է Աստված. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Լրացուցիչ սուրբ գրություններ

Ծննդոց 1.26–27, Ա Կորնթացիս 3.17, Վարդապետություն և Ուխտեր 130.1

Սուրբ գրություններից

Մորմոնի Գրքում Հարեդի եղբայրը միջոց էր փնտրում՝ լուսավորելու ութը նավերը, որոնք պատրաստված էին հարեդացիներին դեպի խոստումի երկիր մեծ ջրերով անցկացնելու համար: Նա «ապարից հալեց տասնվեց փոքր քարեր» և աղոթեց, որ Աստված «դիպչի այս քարերին» Իր մատով, «որ դրանք կարողանան փայլել խավարում»: Եվ Աստված «առաջ մեկնեց իր ձեռքը և իր մատով դիպավ քարերին՝ մեկ առ մեկ»: Վարագույրը վերցվեց Հարեդի եղբոր աչքերից, և «նա տեսավ Տիրոջ մատը. և դա մարդու մատի պես էր: . . .

Եվ Տերն ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու այն խոսքերին, որոնք ես կխոսեմ:

Եվ նա պատասխանեց. Այո, Տեր»:

Եվ «Տերն իրեն ցույց տվեց [Հարեդի եղբորը]» և ասաց. «Տեսնո՞ւմ ես , որ դուք ստեղծված եք ըստ իմ սեփական պատկերի: Այո, հիրավի, ի սկզբանե բոլոր մարդիկ ստեղծվել էին ըստ իմ սեփական պատկերի»: (Տես Եթեր 3.1-17:)

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, “I Know That My Redeemer Lives,” in Conference Report, Apr. 1966, 63.
2. Gospel Topics, “Becoming Like God,” topics.lds.org, տես նաև Մովսես 7.31–37:
3. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
4. Gospel Topics, “Becoming Like God,” topics.lds.org; տես նաև *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 235:

Խորհեք այս մասին

Ուրիշների հետ մեր հարաբերություններում ինչպե՞ս մեզ կարող է օգնել այն գիտելիքը, որ յուրաքանչյուր ոք ստեղծված է Աստծո պատկերով:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15:
Թարգմանության հաստատումը. 6/15: *Visiting Teaching Message, March 2016*-ի թարգմանությունը: Armenian 12863 201